

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/10

20 հունվարի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Ասատուր Օհանջանյանի 10.12.2014 թ-ի և 26.12.2014 թ-ի դիմում-գանգատները ՀՀ ՖՆ 05.12.2014 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6204816 արձանագրության դեմ:

Ա/Ձ Ասատուր Օհանջանյանի գանգատներում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ 05.12.2014 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6204816 արձանագրությունը չի համապատասխանում իրականությանը: Իրականում Խաժակ Փանոսյանի կողմից հսկիչ գնում չի կատարվել, առավել ևս արձանագրությունում նշված անձից՝ Ասատուր Օհանջանյանից: Դրա մասին է վկայում գանգատին կից ներկայացվող տեսագրությունը: Բացի այդ, առանց Ա/Ձ Ասատուր Օհանջանյանի մասնակցության ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, ինչպես նաև վերադարձի կտրոն, առանց ապրանքի հետ վերադարձի: Նշվածից պարզ է դառնում, որ Ա/Ձ Ասատուր Օհանջանյանի կողմից որևէ խախտում չի կատարվել:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Ասատուր Օհանջանյանը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ 05.12.2014 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6204816 արձանագրությունը:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն Շենգավիթի ՀՏ պետի 06.11.2014 թ-ի թիվ 6204816 հանձնարարագրի Ա/Ձ Ասատուր Օհանջանյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 05.12.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6204816 արձանագրությունը (այսուհետ նաև Արձանագրություն), որում մասնավորապես նշվել է.

Խաժակ Փանոսյանի կողմից 05.12.2014 թ-ին, ժամը 13:20-ին ք.Երևան, Երիտասարդական մետրոյի կայարանի նախասրահում գտնվող խանութից կատարվել է հսկիչ գնում 2600 դրամի չափով՝ լցովի օձանելիք (1100 դրամ), մատիտ (500 դրամ), վրձին (500 դրամ), 2 հատ մատիտ (յուրաքանչյուրը 250 դրամ), որի դիմաց վճարված կանխիկ գումարը չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել: Ուսումնասիրությունն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 14:55-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 3350 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Z հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 2600 դրամը, ժամը 14:58-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և նորից դուրս է բերվել Z հաշվետվությունը՝ 2600 դրամ ընդհանուր գումարով: Գնված ապրանքը հարկային տեսուչների կողմից ետ է վերադարձվել և ետ է ստացվել հսկիչ գնման գումարը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթներին, որի համաձայն. «Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»:

Քննարկվող դեպքում ՀՀ ՖՆ 05.12.2014 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6204816 արձանագրության կազմման պայմաններում առկա են Ա/Ձ Ասատուր Օհանջանյանի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքներ: Այսինքն, Արձանագրությունում նկարագրված խախտման ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ ի դեմս հսկիչ գնումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Գանգատների քննարկման ընթացքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Արձանագրությունում նկարագրված խախտումը, ըստ էության, ապացուցված չէ: Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է Ա/Ձ Ասատուր Օհանջանյանի կողմից ներկայացված տեսագրությունը, որտեղ արտացոլված է Արձանագրությունում նկարագրված հսկիչ գնման ողջ ընթացքը: Արդյունքում պարզվել է, որ Արձանագրությունում արտացոլված փաստերը չեն համապատասխանում իրականությանը՝ չի ապացուցվում Խաժակ Փանոսյանի կողմից 05.12.2014 թ-ին, ժամը 13:20-ին ք.Երևան, Երիտասարդական մետրոյի կայարանի նախասրահում գտնվող խանութից 2600 դրամի հսկիչ գնում կատարվելու փաստը:

Վերոգրյալից հետևում է, որ Արձանագրությունը կազմվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի պահանջների խախտմամբ:

Իր հերթին, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Ա/Ձ Ասատուր Օհանջանյանի դիմում-գանգատներով բերված պահանջը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ 05.12.2014 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6204816 արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահ՝

**Վ.ՄԻՐՈՆՅԱՆ**